

ծախուած ապրանքի գինը կրելու համար: « Ան-
թէրէտի » կամ « զոգոնի » վրայ կը հագնին սո-
վորաբար՝ մանաւանդ ամառը, լայն թեղանեօք
կէս-վերարկու մը որ մինչեւ մէջքը կը հասնի
եւ կեռասագոյն մետաքսէ կ'ըլլայ, զոր կը կոչեն
« ֆէրմէնէա », կամ ուումաներէն՝ « սուրգէյթա » .
նոյնպէս նոյնը կը հագնին ձմեռն ալ, միայն թէ
այս « ֆէրմէնէային » աստառը կանաչագոյն, բրը-
գեայ եւ թանկագին մուշտակ կ'ըլլայ:

« Ֆէրմէնէայի » վրայ՝ տարւոյ ամէն եղա-
նակներուն, կը հագնին բրդեայ լայն թեղանեօք
վերարկու մը՝ որուն աստառն է աղուխի մորթ,
եւ մինչեւ ծնկերը կը հասնի, զոր կը կոչեն
« տուլմա » եւ կամ « քացավէյթա », եւ ասոր
վրայ ալ կտաւէ պճղնաւոր վերարկու մը՝ որ ա-
մառը մետաքսէ, իսկ ձմեռը թանկագին մուշտակէ
աստառ կ'ունենայ. աս ալ կը կոչուի « ճիւպպէ »:

Արանց ոտնամանն է դեղին սաֆիանէ հո-
ղաթափ, եւ տաճկական « եէմէնի » կամ « պուշ-
մաքէյ »:

Արանց խոյրն էր յառաջագոյն կարմիր ֆէս,
որուն վրայ տաճկական վարչամակ մը՝ « չուլմա »
կոչուած, կը պատատուէր. իսկ նոր ժամանակ-
ներ կը գնեն խորունկ՝ վերին մասը մետաքսա-
պատ կղբենուոյ խոյր. իսկ աղքատներն՝ գառ-
նենուոյ բարձր խոյր:

Կանանց զգեստն էր առանց թեղանեայ
երկինագոյն՝ նաեւ մետաքսեայ պճղնաւոր հան-
դերձ մը, որ վերէն ի վայր կը ծածկէր, որուն
վրայ կու գայ ըստ աստիճանի եւ հարստութեան